«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0019,
Բաղրամյան 6
Հեռ.՝ (374 10) 52 4040
(374 10) 52 4140
Ֆաքս՝ (374 10) 54 6800
Էլ.փոստ՝ ameria@ameria.am

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ տնօրենների խորհրդին*

Մենք աուդիտի ենթարկել «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) կից ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվություն պարունակող և այլ բացատրական ծանոթագրությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

*Ղեկավարության պատասխանատվությունը*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների: Այդ պատասխանատվությունը ներառում է՝ սխալների կամ խարդախության ազդեցությունից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման պահանջներին համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակումը, ներդրումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և դրա կիրառման ապահովումը, ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր՝ բայց նպատակ չունենալով կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների ողջամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ ֆինանսական վիճակի, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ

Գործադիր Տնօրեն Ա. Անդրեասյան

Աուդիտոր Հ. Հովհաննիսյան

Երևան, 31 մայիսի 2011թ.

«ԱՄԵՐԻԱ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
"АМЕРИЯ АУДИТ"
"AMERIA AUDIT"
00813075

Որակավորված Աուդիտոր, գրանցված ՀՀ պետական ռեգիստրում,
Աուդիտորական ծառայությունների իրականացման ԱԾ թիվ 013 լիցենզիա,
տրված ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից

Beeline

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
*31 դեկտեմբերի դրությամբ*
*(հազար դրամ)*

| ԱԿՏԻՎՆԵՐ | 2010թ. | 2009թ. | 2008թ. |
|---|---|---|---|
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 85,107,529 | 92,697,011 | 106,127,646 |
| Ոչ նյութական ակտիվներ | 6,145,883 | 7,386,466 | 10,663,380 |
| Ներդրումներ | 15,573,448 | 22,289,642 | 9,649,824 |
| Վարձակալված գույքի վրա կատարված հետաձգված ծախսեր | 2,880,309 | 3,293,681 | 3,665,394 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 129,819 | 351,977 | 794,612 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման համար | 416,200 | 103,613 | 320,778 |
| Հետաձգված ծախսեր իրացման պլանների գծով | 158,286 | - | - |
| | 110,411,474 | 126,122,390 | 131,221,634 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 7,001,724 | 3,791,451 | 5,970,142 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 8,217,157 | 8,251,943 | 8,980,343 |
| Ընթացիկ հարկերի և վճարների գծով ակտիվներ | 3,565,380 | 1,006,909 | 2,445,424 |
| Այլ դեբիտորական պարտքեր և հետաձգված ծախսեր | 934,205 | 166,754 | 136,825 |
| Ժամկետային ավանդներ և մուրհակներ | 52,037 | - | 1,800,000 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,041,881 | 6,248,108 | 4,221,864 |
| | 21,812,384 | 19,465,165 | 23,554,598 |
| **Ընդամենը ակտիվներ** | **132,223,858** | **145,587,555** | **154,776,232** |

Beeline

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)
## «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
*31 դեկտեմբերի դրությամբ*
*(հազար դրամ)*

| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2010թ. | 2009թ. | 2008թ. |
|---|---|---|---|
| *Սեփական կապիտալ* | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 18,837,709 | 18,837,709 | 18,837,709 |
| Կուտակված շահույթ | 93,095,714 | 107,699,320 | 109,759,399 |
| Պահուստային կապիտալ | 2,825,656 | 2,825,656 | 2,825,656 |
| | 114,759,079 | 129,362,685 | 131,422,764 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 830,812 | 2,456,217 | 4,942,390 |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 401,578 | 357,623 | 168,505 |
| Հետաձգված եկամուտներ | 751,762 | 770,478 | 782,266 |
| | 1,984,152 | 3,584,318 | 5,893,161 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս | 1,417,150 | 3,490,782 | 5,132,493 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 10,931,532 | 6,188,077 | 9,018,640 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով | 252,598 | 244,037 | 157,279 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 904,350 | 877,139 | 1,109,603 |
| Ընթացիկ հարկային և այլ պարտավորություններ | 629,408 | 780,922 | 1,154,347 |
| Ընթացիկ պահուստներ | 900,701 | 916,694 | 791,079 |
| Հետաձգված եկամուտներ | 444,888 | 142,901 | 96,866 |
| | 15,480,627 | 12,640,552 | 17,460,307 |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **132,223,858** | **145,587,555** | **154,776,232** |

Իգոր Կլիմկո, Գլխավոր տնօրեն

Կարեն Շահնազարյան, Ֆինանսական տնօրեն

Ժիրայր Պապոյան, Գլխավոր հաշվապահ

Beeline
ընտրիր կյանքի պայծառ կողմը

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
## «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
*31 դեկտեմբերին ավարտված տարվա համար*
*(հազար դրամ)*

| | 2010թ. | 2009թ. |
|---|---|---|
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 67,844,666 | 72,570,871 |
| Իրացված ծառայությունների ինքնարժեք | (45,208,249) | (41,934,229) |
| Համախառն շահույթ | 22,636,417 | 30,636,642 |
| Իրացման ծախսեր | (4,764,642) | (4,494,433) |
| Վարչական ծախսեր | (5,959,247) | (5,140,708) |
| Այլ եկամուտներ/ծախսեր | (5,357,398) | (5,800,119) |
| Գործառնական շահույթ | 6,555,130 | 15,201,382 |
| Ֆինանսական եկամուտ | 2,177,017 | 1,620,312 |
| Ֆինանսական ծախսեր | (110,270) | (273,664) |
| Շահույթ մինչև հարկումը | 8,621,877 | 16,548,030 |
| Շահութահարկի գծով ծախս | (3,225,483) | (4,608,109) |
| Համապարփակ ֆինանսական արդյունք | 5,396,394 | 11,939,921 |

Իգոր Կլիմկո, Գլխավոր տնօրեն

Կարեն Շահնազարյան, Ֆինանսական տնօրեն

Ժիրայր Պապոյան, Գլխավոր հաշվապահ

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
02600052
«ARMENIA TELEPHONE COMPANY»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԻ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY